# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՎԱՏԻԿԱՆՈՒՄ



*Ապրիլի 9-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին պաշտոնական այցով մեկնեց Վատիկան:*

Այցի շրջանակներում, Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Հռոմի պապ Ֆրանցիսկոս Առաջինի, Վատիկանի պետական քարտուղարության ներկայացուցիչների հետ:

Վրաստանի նախագահի հետ Վատիկանում է գտնվում նաեւ Վրաստանի առաջին տիկին Մակա Չաչուան:

Պատվիրակության կազմում են Վրաստանի Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, նախագահի աշխատակազմի պետ Դավիթ Պատարաիան, տնտեսական հարցերով նախագահի խորհրդական Գիորգի Աբաշիշվիլին, միջազգային հարաբերությունների հարցերով նախագահի խորհրդական Թենգիզ Փխալաձեն, Վատիկանում Վրաստանի դեսպան Թամար Գրձելիձեն:

Վրաստանի նախագահի եւ Հռոմի պապի առանձնազրույցն կայացավ պապական գրադարանում: Կողմերը քննարկեցին Վրաստանի եւ տարածաշրջանի իրավիճակի, անվտանգությանն առնչվող հարցեր: Հանդիպմանը ընդգծվեց, որ Վատիկանը շարունակում է հավատարիմ մնալ Վրաստանի տարածքային ամբողջականության եւ ինքնիշխանության աջակցության դիրքերին:

Առանձնազրույցից հետո Գիորգի Մարգվելաշվիլին Ֆրանցիսկոս Առաջինին ներկայացրեց Վրաստանի առաջին տիկնոջն ու պատվիրակության անդամներին: Ավարտին Վրաստանի նախագահը Հռոմի պապին նվիրեց աչեն մենաստանի Հարության խորաքանդակի պատճենը, իսկ Հռոմի պապը իր հերթին Գիորգի Մարգվելաշվիլուն հանձնեց Սուրբ Մարտինի քանդակը:

ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾ

## ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԲԱՐՁՐԱԼԵՌ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

*Վրաստանի խորհրդարանում ավարտեցին բարձրալեռ տարածաշրջանների մասին նոր օրինանախագծի մշակումը: Ինչպես նշեց խորհրդարանական մեծամասնության անդամ Զախարիա Քուցնաշվիլին, օրինանախագիծը նախաձեռնվել է կառավարության կողմից, անցել գործադիր իշխանության կողմից անհրաժեշտ բոլոր ընթացակարգերը եւ ապրիլին կներկայացվի խորհրդարանի քննարկմանը:*

Նոր օրինանախագիծը սահմանում է որոշակի արտոնություններ բարձրալեռ տարածաշրջանների համար: Մասնավորապես, այդ երկրամասերում ապրող կենսաթոշակառուների համար կենսաթոշակին կավելացվի հավելավճար՝ 20 տոկոսի չափով (32 լարի), բուժքույրերին կտրվի ամենամսյա հավելավճար 160, իսկ բժիշկներին՝ 320 լարիի չափով: Ձմեռային ժամանակահատվածում բնակչությանը վառելանյութով ապահովելու համար, պետությունը կմարի բնակչության կողմից ծախսվող էլեկտրաէներգիայի 50 տոկոսը, սակայն, առավելագույնս 100 կիլովատտ ժամի չափով: Տարվա ընթացքում յուրաքանչյուր նորածնի համար ամենամսյա նպաստ՝ 100 լարիի չափով: 50 տոկոսի չափով (առնվազն 150 լարի) կտրվի ուսուցիչներին: Բարձրալեռ տարածաշրջանների դպրոցների աշակերտներին կտրվեն ավելացված գումարով վաուչերներ:

Ներկայումս ընթացքի մեջ է նախատեսված արտոնությունների համար իրականացվելիք ծախսերի հաշվարկը:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վրաստանի տնտեսական խորհրդում քննարկվեց եւ հաստատվեց Հարկային օրենսգրքի փոփոխությունների ծրարը, որը ներառում է մի շարք էական փոփոխություններ:*

Օրինանախագծում առաջարկված միջոցառումների թվում է մասնավոր անձանց համար հարկային դրույքի նվազեցման եւ 20-ից մինչեւ 5 տոկոս անշարժ գույքի վարձակալման հարկադրույքի նվազեցման առաջարկությունները: Նաեւ քննարկվում է ավտոմեքենաներ ներկրողների խրախուսման համար հարկային ազդակի հաստատում եւ ցորեն ներկրողների համար ՀԱՀ-ի վճարման ժամկետների ընդլայնման հնարավորությունը:

Օրինանախագիծը մոտ օրերին կներկայացվի խորհրդարանի քննարկմանը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴԴԻՄԱԴԻՐ ԴԻՐՔ Է ԲՌՆԵԼ»

*Վրաստանի նախկին վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հերթական անգամ քննադատության է ենթարկել Գիորգի Մարգվելաշվիլուն, որը, նրա կարծիքով, ընդդիմադիր դիրք է բռնել երկրի կառավարության նկատմամբ,:*



Ավելի վաղ Իվանիշվիլին քանիցս քննադատել է վրացական պետության ղեկավարին, մասնավորապես, նա Մարգվելաշվիլուն մեղադրել է այն բանում, որ նա մրցակցում է կառավարության եւ խորհրդարանի հետ եւ դրանով իսկ խանգարում նրանց աշխատանքին: Այս հայտարարությունից հետո կառավարող կոալիցիայի ներկայացուցիչների մեծամասնությունը պաշտպանել է նախկին վարչապետի կարծիքը: Բացի այդ, ավելի վաղ Իվանիշվիլին հերթական հարցազրույցի ժամանակ դժգոհություն է հայտնել Մարգվելաշվիլուց այն բանի կապակցությամբ, որ վերջինս տեղափոխվել է Թբիլիսիի կենտրոնում գտնվող նախագահական նստավայր, որը կառուցվել է նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի կողմից:

«Ես ելույթ եմ ունեցել մի քանի անգամ եւ ընդգծել, որ նա նախագահական ընտրություններից հետո արդեն երկրորդ օրը դիմակայում էր իր թիմին, որը նրան բերեց նախագահության: Նման բան դժվար է հիշել քաղաքականության համաշխարհային պատմության մեջ: Ես այսօր էլ կարող եմ հիշեցնել հասարակությանը նախագահի տեղափոխվելը պալատ, վետո դնելու նրա գործելակերպը, Նյու Յորք այցի կապակցությամբ նրա քմահաճությունները... Մի խոսքով, նա ընդդիմադիր դիրք է բռնել թիմի նկատմամբ եւ չի հայտնում այդ մասին, թեեւ իր բոլոր արարքներով ապացուցում է դա»,- հայտարարեց Բիձինա Իվանիշվիլին՝ ապրիլի 5-ի երեկոյան ցուցադրված իր հեռուստահաղորդման ժամանակ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ



*Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան խորհրդարանի ագրարային կոմիտեին ներկայացրեց իրականացված աշխատանքի եւ 2015-2020 թվականների համար գյուղատնտեսության զարգացման ռազմավարության վերաբերյալ հաշվետվությունը:*

Նախարարի պարզաբանմամբ, ոլորտի զարգացման ռազմավարությունը, որը հիմնված է կայուն զարգացման սկզբունքների վրա, նախատեսում է այնպիսի միջավայրի հիմնումը, որը կնպաստի ագրոմթերքների ոլորտում մրցունակության բարձրացմանը, բարձրորակ արտադրանքի արտադրության կայուն աճին, մթերային անվտանգության ապահովմանն ու գյուղերում աղքատության հաղթահարմանը:

Օթար Դանելիայի խոսքերով, ռազմավարության իրականացման գործընթացում առանձնակի ուշադրություն կհատկացվի տարածաշրջանների եւ մունիցիպալիտետների տնտեսական զարգացմանն ուղղված միջոցառումներին, ինչպես նաեւ ինստիտուցիոնալ կառույցների կատարելագործմանը, տեղեկատվական-խորհրդատվական սպասարկումների գործառնության արդյունավետության բարձրացմանը, շուկայական հարաբերությունների պահանջներին համապատասխան՝ ֆերմերների նախապատրաստմանը, գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացմանը, գյուղատնտեսական ենթակառույցների վերակառուցքավորմանը, վիճակագրական հաշվարկումների կարգավորմանը, շուկայական տեղեկատվական համակարգի ստեղծմանը, մթերային անվտանգության վերլուծությանը եւ վերահսկողության որակի բարձրացմանը, համապատասխան ճկուն օրենսդրության մշակմանը:

Նախարարի խոսքերով, իր գլխավորած գերատեսչությունն արդեն ֆինանսների նախարարությանն է հանձնել իր ծրագիրը ոլորտի շրջանակներում ծախսերի կրճատման վերաբերյալ:

Միաժամանակ, Օթար Դանելիան նշեց, որ ոլորտի զարգացման համար անհրաժեշտ են լրացուցիչ ներդրումներ: Նա խոսեց դոնոր կազմակերպությունների հետ հարաբերությունների նոր փուլի ձեւավորման մասին:



### ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ
### ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻՆ ՈՒՆԵՑԱՎ ԵՐՐՈՐԴ ՈՐԴԻՆ

*Ինչպես տեղեկացրել է Վրաստանի վարչապետի մամլո ծառայությունը, Իրակլի Ղարիբաշվիլին երրորդ որդին է ունեցել:*

*Երեխան ծնվել է ապրիլի 7-ին: Իրակլի Ղարիբաշվիլին եւ Նունուկա Թամազաշվիլին նրան Գաբրիել են անվանել:*

*Մայր ու որդի իրենց լավ են զգում:*

### ԿԱՅՑԵԼԵՆ ՎՐԱՍՏԱՆ

*Լեհաստանի, Դանիայի եւ Շվեդիայի արտաքին գործերի նախարարները ապրիլի 14-ին կայցելեն Վրաստան: Այդ մասին հայտնեց Վրաստանի ԱԳ նախարարության մամուլի խոսնակ Դավիթ Կերեսելիձեն:*

*«Նախարարները հանդիպումներ կունենան արտաքին քաղաքական գերատեսչությունում, ինչպես նաեւ կհանդիպեն նախագահի, վարչապետի եւ խորհրդարանի նախագահի հետ»,- ասել է նա:*

*Այցի շրջանակներում, Վրաստանի եւ Լեհաստանի միջեւ հուշագիր կստորագրվի Թբիլիսյան խորհրդաժողովի հիմնման մասին:*

*«Սա համագործակցության միանգամայն նոր փուլ է: Այն նախատեսում է Լեհաստանի ավելի ակտիվ մասնակցությունը Վրաստանի եվրոպական եւ եվրատլանտյան ձգտումների իրականացմանը»,- նշել է Կերեսելիձեն:*

### ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱՍԿԱԾՅԱԼԸ



*Ապրիլի 10-ին հատուկ գործողության արդյունքում Բորժոմիում ձերբակալվել է ոստիկանների սպանության մեջ կասկածյալ Շալվա Աբուլաձեն:*

*Նշենք, որ բորժոմցի, 38-ամյա Շալվա Աբուլաձեն փնտրտուքի մեջ էր հայտարարվել ապրիլի 5-ին Թբիլիսիում մի ոստիկանին՝ Բեքա Մարգիշվիլուն սպանելու եւ երկրորդին՝ Վալերիան Գրձելիշվիլուն վիրավորելու կասկածով: Իսկ մինչ այդ, հունվարին, նրա նկատմամբ արդեն փնտրտուք էր հայտարարվել Բորժոմիում ոստիկանների վրա հարձակվելու պատճառով, որի ժամանակ ոստիկան Գիորգի Բերուաշվիլին զոհվել էր:*

*Նշենք, որ Շալվա Աբուլաձեն մի քանի անգամ դատապարտվել էր կողոպուտի եւ մահափորձի համար, իսկ 2007 թվականին դատապարտվել 20 տարվա ազատազրկման: Նա բանտից ազատ էր արձակվել 2013 թվականին՝ համաներման արդյունքում:*

### ՉՈՐՍ ԶՈՀ՝ ՎԱՐՁՈՒ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ

*Վրաստանի ՆԳ նախարարության աշխատակիցները, Թբիլիսիի վարձու բնակարաններից մեկում, հայտնաբերել են Նիգերիայի չորս քաղաքացիների մարմիններ, որոնք, ինչպես ենթադրվում է, մահացել են գազի արտահոսքից:*

*Տարածված տեղեկատվության համաձայն,՝ օտարերկրացիները Թբիլիսիի համալսարանի ուսանողներ էին եւ ապրում էին վարձու բնակարանում: Նրանց ընդհանուր ընկերը դիմել է ոստիկանությանը՝ խնդրելով օգնել այն բանից հետո, երբ Նիգերիայի քաղաքացիները երկու օր կապի մեջ չեն մտել:*

*Ենթադրվում է, որ արտահոսքը տեղի է ունեցել ջրի գազաջեռուցիչի սխալ տեղակայման պատճառով: Վրաստանի ՆԳ նախարարությունն առայժմ պաշտոնական մեկնաբանություններ չի արել:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

# ԱՊՐԻԼ



*07.04.2015թ. Ավետումն Սուրբ Աստվածածնի*

Ամեն տարի ապրիլի 7-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նշում է Սուրբ Մարիամ Աստվածածնի Ավետման տոնը:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսն այդ օրը հռչակել է որպես մայրերի եւ մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության օր:

Ապրիլի 7-ին բոլոր եկեղեցիներում Սուրբ Պատարագ է մատուցվում եւ մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնության կարգ է կատարվում:

*11.03.2015թ. Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օր*

Սուրբ Հարության տոնի հաջորդ շաբաթ օրը Հայ Առաքելական եկեղեցում Հիսուս Քրիստոսին մկրտողի եւ Նրա գալուստն ավետողի՝ Սուրբ Հովհաննես Մկրտչի գլխատման հիշատակության օրն է:

Սուրբ Հովհաննես Մկրտիչը հավատացյալների բարեխոս սուրբն է եւ յուրաքանչյուր հավատացյալ, իր աղոթքներով դիմելով այս սրբին, նրա բարեխոսությամբ արժանանում է Տիրոջ ողորմությամբ:

*12.04.2015թ. Կրկնազատիկ (Նոր կիրակի)*

Կրկնազատիկ է կոչվում երեք պատճառներով:

Զատիկ նշանակում է ազատություն եւ այդ օրը կրկնակի ազատության օր է: Աստված մեզ ազատել է մեղքերից, սակայն մենք գտնվում ենք կրքերի ազդեցության ներքո: Իսկ երբ Աստված ամեն ինչ նոր է անում եւ բոլոր կարիքներից մեզ ազատում, դա կոչվում է Կրկնազատիկ: Կրկնազատիկ է կոչվում մեր հարության պատճառով: Քրիստոս առաջին կիրակի օրը մեզ հարություն տվեց Իր հոգով ու զորությամբ, իսկ երկրորդ կիրակի օրը մեզ հարություն է տալու ըստ մարմնի՝ եւ մեռելներից հարություն առնելով պիտի անմահանանք: Նոր կիրակի եւ Կրկնազատիկ է կոչվում, քանզի նորովի ենք տոնում մեր հոգու փրկության նավակատիքը՝ հոգեւոր ուրախությամբ ու տոնախմբությամբ:

## ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ ԵՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

***Ինչպես տեղեկացնում է վիճակագրական ծառայությունը, 2014 թվականին նորածինների թիվը 4,8 տոկոսով գերազանցում է նախորդ տարվա ցուցանիշը եւ կազմում է 60635 երեխա, որից 31325-ը տղա է, 29310-ը՝ աղջիկ:***

2008 թվականից նորածինների ընդհանուր թվաքանակում աճել է երրորդ եւ հաջորդ երեխայի բաժինը, իսկ առաջին երեխայի բաժինը նվազել է: Երկրորդ երեխայի բաժինը գործնականում մնացել է անփոփոխ: Այդ միտումը շարունակվեց նաեւ 2014 թվականին եւ, նախորդ տարվա համեմատությամբ, առաջին երեխայի տոկոսային բաժինը նվազել է 1,8 տոկոսով, իսկ երրորդ եւ հաջորդ երեխայի բաժինը աճել է 1,7 տոկոսով: Երկրորդ երեխայի բաժինն ավելացել է 0,1 տոկոսով:

2014 թվականին մինչեւ 25 տարեկան մայրերից ծնված երեխաների թիվը 42,6-ից նվազել է մինչեւ 40,7 տոկոս: 2013 թվականի համեմատությամբ, 2014 թվականին մահացածների թիվը ավելացել է 1,1 տոկոսով եւ կազմել 49087:

Մահացության աճն անդրադարձել է նաեւ մահացածների տարիքային-սեռական կառուցվածքի վրա: Աճ է գրանցվել 70-74 տարիքային խմբում՝ ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մոտ: Մահացության մակարդակը նվազել է կանանց 65-69 եւ 75-ից բարձր տարիքային խմբում, իսկ տղամարդկանց շրջանում՝ 60-69 եւ 75-79 տարիքային խմբում:

Նորածինների մահացության գործակիցը (յուրաքանչյուր հազար նորածնի հաշվով՝ մինչեւ մեկ տարեկան մնացածների թիվը) 2014 թվականին կազմել է 9,5 տոկոս, ինչը 1,6 տոկոսով պակաս է նախորդ տարվա ցուցանիշից: Նախորդ տարվա համեմատությամբ, բնական աճի ցուցանիշը ավելացել է 23,8 տոկոսով եւ կազմել 11548:

Վիճակագրական ծառայության հրապարակած տվյալներով, 2014 թվականին գրանցված ամուսնությունների թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 9,1 տոկոսով եւ կազմել 31526, իսկ ապահարզանների թիվը, 2013 թվականի համեմատությամբ, ավելացել է 12,7 տոկոսով ու կազմել 9119-ը:

2014 թվականին, նախորդ տարվա համեմատությամբ, 27,5 տոկոսով ավելացել է այն ընտանիքներում ապահարզանների թիվը, որոնք համատեղ ապրել են 0-10 տարի: Ապահարզանների ընդհանուր ցուցանիշում մինչեւ մեկ տարվա ամուսնությունից հետո ապահարզանների բաժինը բարձր է, կազմում է 7,7 տոկոս:

## ԿՐԹԱԿԱՆ

# ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Մարտի 21-ին Վրաստանի ուսուցիչների մասնագիտական կրթության ազգային կենտրոնի տնօրեն Գիորգի Մաչաբելին «Վրաց լեզուն ապագա հաջողությունների համար» ծրագրի վեցերորդ հոսքի 21 մասնակիցներին հանձնեց հավաստագրերը: Կամավոր մանկավարժները երկու սեմեստրի ընթացքում աշխատել են Սամցխե-Ջավախեթիի, Քվեմո Քարթլիի եւ Կախեթիի ոչ վրացական դպրոցներում եւ հաջողությամբ ավարտել ծրագիրը:

Նշենք, որ «Վրաց լեզուն ապագա հաջողությունների համար» պետական ծրագիրը կողմնորոշված է երկրում ապրող ազգային փոքրամասնություններին ուսուցանել պետական վրաց լեզուն:

## ՎԱՐԿԱՆԻՇ

# «ՎԻԶԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ» ԻՆԴԵՔՍԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿԸ




***«Հենլի եւ գործընկերներ» ընկերությունը հրապարակել է «Վիզային սահմանափակումների» վարկանիշային աղյուսակը, որով աշխարհի երկրները դասակարգել է ըստ վիզային ռեժիմի ոլորտում քաղաքացիների ունեցած ազատությունների:***

Շվեյցարիայում տեղակայված ընկերությունը վերլուծում է աշխարհի 219 երկրներում գործող վիզային ռեժիմները եւ նրանց դասակարգում ըստ նրա, թե այդ երկրի քաղաքացիները քանի երկիր կարող են ճանապարհորդել առանց մուտքի արտոնագրի: Առաջին տեղն են զբաղեցնում Ֆինլանդիան, Գերմանիան, Շվեդիան, Միացյալ Թագավորությունը եւ ԱՄՆ-ը, որոնց քաղաքացիները կարող են առանց արտոնագրի մուտք գործել 174 երկիր: Դասակարգման համաձայն՝ Վրաստանի քաղաքացիներն առանց վիզայի կարող են մուտք գործել 62 երկրներ, Հայաստանի քաղաքացիները՝ 55 երկիր: Առանց մուտքի արտոնագրի Ռուսաստանի Դաշնության եւ Թուրքիայի քաղաքացիները կարող են այցելել 100, Ադրբեջանի քաղաքացիները՝ 58, իսկ Իրանի քաղաքացիները՝ 40 երկիր:




## ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

# «ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊՐԱԾՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ»



*Այս խորագիրն էր կրում Վիրահայոց թեմի «Հայարտուն» կենտրոնում ապրիլի 4-ին կայացած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումը: Ախալցիխեցի լուսանկարիչ եւ լրագրող, 34-ամյա Սերգեյ Ֆիդանյանի նախաձեռնությամբ, «Հայարտուն» կենտրոնի աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի հովանու ներքո կազմակերպված հեղինակային լուսանկարների ցուցադրությանը կցվել էին Ցեղասպանությունից փրկվածների ու Վրաստանում ապաստանածների ժառանգների հայերեն, վրացերեն, ռուսերեն պատմությունները:*

Կենտրոնի սրահի պատերին փակցված լուսանկարները ներկայացնում էին Հայոց ցեղասպանությունը վերապրածների չորս սերնդի 34 ժառանգների, որոնց միավորել էր հայկական գենը եւ հայ ազգի նկատմամբ ոճրագործությունը:

Ցուցահանդեսը բացեց «Հայարտուն» կենտրոնի ղեկավար Լեւոն Չիդիլյանը:

Բոլոր ելույթ ունեցողները՝ «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության խորհրդական Կարեն Մելիքյանը, Թբիլիսիի հայ մտավորականների միության նախագահ Ենոք Թադեւոսյանը, Վրաստանի հայերի միության նախագահ Հենրիխ Մուրադյանը, լուսանկարիչներ Յուրի Մեչիտովը, Ռուբեն Ռուխկյանը, նկարիչներ Ջովաննի Վեփխվաձեն, Իռենա Օհանջանովան, ՎՀՀԿ նախագահ Սամվել Մկրտչյանը, բանաստեղծուհի Անահիտ Բոստանջյանը, մանկավարժ Մանանա Կարապետյանը, Վիկտորյա Մաքսուեան եւ ուրիշները արժեւորեցին հեղինակի մտահղացումը:

Երախտագիտություն հայտնելով Վիրայոց թեմի առաջնորդին եւ «Հայարտուն» կենտրոնի ղեկավարությանը աջակցության համար՝ Սերգեյ Ֆիդանյանը ցուցահանդեսն անվանեց իր ներդրումը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի հիշատակին՝ հայտնելով այն Ջավախեթիում եւ քաղաքամայր Երեւանում ցուցադրելու իր նպատակի մասին:

Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, իր օրհնությունը բերելով ներկաներին, կարեւորեց սփյուռքահայության դերն ու նշանակությունը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ այն դատապարտելու գործում:

Որոշվեց ցուցահանդեսի լուսանկարները եւ կցված պատմությունները հրատարակել առանձին գրքով:

***ՍՈՒՍԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ***

## ՀԱՄԱՅՆՔ

# ՏՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

***Ապրիլի 5-ին Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում նշվեց Սուրբ Հարության տոնը՝ Սուրբ Զատիկը, որին հավատացյալների հետ միասին մասնակցեցին նաեւ Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը եւ Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը:***



Սուրբ պատարագից հետո, ելույթ ունենալով բաթումահայ հավատացյալների առջեւ, քաղաքապետը ջերմորեն շնորհավորել է բոլորին Սուրբ Զատկի տոնի առթիվ՝ լավագույն մաղթանքներ հղելով իր հայազգի համաքաղաքացիներին: Արամ Գրիգորյանը իր երախտագիտության խոսքն է ուղղել Բաթումիի քաղաքապետին՝ հայկական եկեղեցու եւ համայնքի նկատմամբ մշտական ուշադրության եւ աջակցության համար՝ընդգծելով եկեղեցու դիմաց քաղաքապետարանի կողմից վաղուց սպասված ցայտաղբյուրի վերականգնման փաստը:

Նույն Սուրբ Փրկիչ եկեղեցում ապրիլի 7-ին Արամ Գրիգորյանը ՀՀ սփյուռքի նախարարության պարգեւներ, ինչպես նաեւ Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոսության շնորհակալագրեր է հանձնել մի խումբ բաթումահայ կանանց: «Մայրենիի դեսպան» մեդալի արժանացավ հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի, Բաթումիի հայկական դպրոցի ուսմասվար Դոնարա Վարոսյանը: Հայոց լեզվի եւ գրականության, կիրակնօրյա դպրոցի, եկեղեցուն առընթեր Գեղագիտական կենտրոնի ու «Հեղնար» պարային խմբի ուսուցիչներ եւ համայնքային ակտիվիստներ արժանացան պատվոգրերի ու շնորհակալագրերի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445